

ԲԱՐԱ 30

ՄԷՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

ԲԱՐԱ 50

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
65, Grand-rue de Péra, Taksim, 65

ԱՊՐԱՆԻ ԶԵՆՈՒԹԱՐԸ ՍԵՆԷՆԻ ԿԱՐԴԻ
Խորանայի իշխն Դրուե 60 35
Թաւառ իշխն 85 45
Մէնայի լէճէպի իշխն Ֆրանգ 20 10

ՉԼԸՆԷՆՊԻԶ ԳԼՈՒԹՈՒ ԵՐԹԻՍԻ
ԿԻՆԼԷՐԻ ՆԷՐ ՕԼՈՒՆՈՒՐ
Իրանի իշխն արքան Բաղդադ :

مجموعه اخبار
بك اوغلى تقسيم جاده سی و نهم

202

ԱՌ ՆՈՐԻՆ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՎԵՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ Տ.Տ. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԹԵՐԶԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

« Օրինակ բարեաց եւ առաքինութեան
« մանկաւոյ թողից, զի յօժարութեամբ եւ
« քաջութեամբ ի վերայ սրբութեան օրի-
« նացն՝ մահու չափ ջանալ մարքասցեն:»
(Բ. Մակ. 2, 28)

Աստուածորդին արարչագործ բնութեամբն ի խաչին
ի սէր եղով իւր ծառայից, մահկանացուացըս չընչին
Մինչ իսկ հեղուր ցըլիթ յետին զանգին արիւն փրկչական
եւ կարեւոր անեղի ի ծով կայր խորատու թաղծովեան,

Առ մարդկութիւն զիւր սէր անճառ եթող որդւոյն իւր յաւանդ,
եւ տիգախոցն Սիրտ յայնժամ խօսէր ի շունչ բոցեռանդ.
« Ի զին բնաւից վշտակութեանց, տառապանաց ինքնակամ,
« Զայս օրինակ պարտ իսկ է ձեզ սիրել զիրեար յարածամ:»

Ի կողահոս այն յարեւելն եւ ի սրտն աստուածեան
Մընան անդէն սուրբ առաքեալք՝ աւետարեք ժողովեան,
Վեհ հայրապետք, խոստովանողք, զիւցազնաշունչ եւ վրկայք,
Արդիւնաշատ Զոհի մեծին երկրպագուք մշտակայք:

Անտի ուրեմն եւ ի քո սիրտ հատան սիրոյ ճառագայթք,
Անտի քեզ ցանդ խնայութիւն, որով փշրին որդայթք...
Ի զէւր գոյնն շուրջ ըզքեւ կրկն կոհակը ալեւաստ,
Ընդ երկնահորդ ուղ անմոլար թուչի հոգիդ գերըզգաստ:

Յոգնադիմի թշուառութեանց մարդկան ազգի դու ի տես
Ի լուր որդւո՞ւ հառաչանաց, ողորդ զոր քաջ իսկ գիտես,
Ետուր ըզքեզ յորդորամիտ բուռն աղեկէզ տանջանաց,
Վիշաք եւ վրտանգք ի քեզ անդու, ո՛հ, խուժեցին սրբնթաց:

Որքեւ եւ այլիք ի քեզ զիւրեանց գրտին պաշտպան անվհեր,
Եւ մանկտին ուսումնատենչ դաստիարակ կրթմասեր.
Իրանաւորաց յաւէտ ընդգէմ վրէժխընդիր կանգնեցար,
Եւ առ լրկեալն հէզ անտէրունչ երկնաբարոզ մըխիթար:

Պարտաճանաչ պաշտօնէից եղեր դու հայր բարեգութ,
Ապիրատից եղեւնութեանց կացեր արի խոյ եւ խուժ,
Զարդարութեան համբուրեցեր ճակատն անբիծ լուսաղող,
Եղեւ վայրագ խրժդրութեանց գլուխն ի բէն ոտնակոխ:

Որպէս երկիր արեւակէզ երաշտութեան յետ երկար՝
Տենչայ սաստիկ կարօտալիր յորդ անձրեւաց բարեբար,
Որպէս անմեղն պարտական ցանկայ սերտիւ հայրենեաց՝
Սոյնօրինակ Ազգն ի վաղուց ըզձայր Վեհիդ անձկայրեաց:

Աւերակաց մեր Հայրութեան տացես դու շունչ կենսալիր,
Բեւ փայլեաց չըքեզայուք պատիւ կրօնից լուսածիր,
Բեւ ըսկեպտիկն ի ծուրն իջեալ սուրբ խորանին առնթիւ,
Բարեպաշտից իսկ քեւ հոգիդ սլացին ի վէր ընդ եթեր:

Կեցցես ուրեմն մօլս յամայր, նուիրապետ երկնաւար,
Պրտակեցին ճրգունք քո վեհ յաղթանակաւ մշտաբազ,
Եւ անըսպառ փոխան սիրոյն զոր սիրեցեր ըզբոյս յար՝
Ինչեւ երկնիք ըզքեզ Սրբոց Հայրապետաց մեր ի շար:

13 Յունիս 1910

Ո. Կ. Մ.

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԲԱՐԵՐՋԱՆԻԿ

ՀՈԳԵԻՈՐ ՏԵՐ ՍԵՐ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

ՆՈՐԱՊԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ի ՀՈՌՎԱՐԺ ԳԱԶԻՅՆ ՎԵՐԱՊԱՏՈՒԵԱԼ

ՆՈՒԱԳ

- Տ Իրկեան երկիր զուարճացի՛ր բերկրեալց,
- Տ Բանիկ եղեր ՚ի մէջ աշխարհաց.
- Տ Ընծովիւնըք քու՛մ են հաւանակից
- Տ անկորդ աղճանձը սիրտը մեր համայնից.
- Տ Ըրկնը շնորհեցին Հայրապետ մեզ քաջ,
- Տ Երտ սիրով այսօր գնացուք ընդ առաջ:

- Տ Իսրայն բանիւք՝ որդիք Թորգոմայ՝
- Տ սկական սիրոյն ըզմեր հաւատեալ
- Տ ուր եղեալ պատուով ցուցուք յանդիման.
- Տ Եսցեն ազգք աղինք ըզխնդս անպայման:

- Տ արթափեալ ՚ի չփոխ եւ յոյզ ժամանակ՝
- Տ Ըրեւալ սաստիկ յոյժ տատանեալք (*)
- Տ Էնական ձայնին հրնչեաց արձագանգ,
- Տ մայլմամբ աշխարհի գործն իսկոյն ել յանգ.
- Տ Ըրեւ համայունչ ՚ի չորից կողմանց
- Տ Ըրկէ հրաշակի Անունդ մեծապանծ.
- Տ պաքէն ցապար յեցեալ եմք ՚ի յոյս՝
- Տ որ նորոգեցես զփայլ եկեղեցւոյս:

- Տ ովին հօտերէց Դերմակ(**) յորըրջիւ.---
- Տ նուն յորըրջման մերս Հայրապետի
- Տ անգի բարեգէպ ի նոյն ձեւ բանի.
- Տ ախական նանակ յերկնից ցուցանի.
- Տ Ըրդ Դու ըզՆիմիչ մեր եկեղեցւոյ
- Տ աղատիմք ո՛հ ճէր՝ պահեա՛ւ ե կեցո՛ւ.
- Տ Ըրհացուք հա՛պա համարձակարան՝
- Տ Իրանուէրդ կեցցես Հայրապետ ԹԵՐԶԵԱՆ:

ՅՈՒԶ. Վ. ՄԵԿՈՒՆԻ

(*) Ակնարկութիւն անցիցն անցիցն ՚ի պարագութեան Կաթողիկոսական Աթոռոյն:
(**) Զի անուն յորըրջանաց Նորին Սրբութեան Պիօր ժ. Ե Սարթոյ (Sarto). որ
թարգմանի հայերէն «Դերմակ» այսինքն է տաճկերէն Թերզեան. զարմանալի զուգա-
հաւասարութիւն:

202

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ

Տ.Տ. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ Կ-ՊԱՏՐԻԱՐԺ

Հապ՛օն Հայեր համարուն, յառա՛ջ յոյցոյն Հայրիկի,
Հանդես հաւանս հրճուագին, Հայրապետին Հայագգի.
Հապ՛օն յառա՛ջ Հայրորդի համախմբեալ, հոյ ի հոյ,
Յողորն Հովնիկ հայրենեաց, Հաւածելոյն հրանշոյ:
Հայցեմ համայն Հայութեան ի հասածից յարարար
Համախմբի յայս առաւ ընդ հովանեաւ հրաշափառ:
Հայիչ հեշտի, խօյ խնդիւք ի Համիսե հաւածեալ,
Հայրագորով Հօսաղին հուրե ի յոյս յարուցեալ:
Խորշակի, հողմուկի յարութեան հեզգեհեհ հետանալ,
Հանգչին խոռով հրմայիւք հրաւիրին հայրական:
Հանին հակեւր յուսացից խօսից խոհուն Հայրիկին,
Հրճուի համայն Հայութեան ի խոր խոցեալ խեղճ հոգին.
Դո՛ւ Թերզեան Տէր, Թորգմենաց Տէր զիսկս դառնացեալ,
Դաշուհաւար դեռասխս Տէր դէն, դէս քառամեալ:
Հայեցար Հայր, ի հեռունս հարազատաց Հայկազնեաց,
Հայեցար Հայր, ի հայցումն հոնդիւն հազաւն «հա՛ց հա՛ց հա՛ց»:
Այդ արհաւոռն արիւնեհ, այդ արթնիւն անօրի,
Գու կերպարանդ հոգեւոր կը գեղգեղէ կոչն գուրի.
Սոյ անագորդ կոչեւոյդ իրեւ արիի յուսաստ:
Հա՛յր Հայուն հպեցնող շրթն կոփե՛ Հայրիկ դո՛ւ:
Դո՛ւն մեր յոյսը, ապագան վառ շողիկը Հայութեան՝
Անխզելի կայն եղիր Հայութեան մեջ յաւիտեան.
Եւ ես յեթինն քո որդոց անհամարաւ զողորմուն՝
Կոչեմ գեղ աշմեհն իսկ գոգիչ Հայրիկն խեղճ Հայուն.
Այս մեկ քառք սիրական, այս մեկ քառք «մեր Հայրիկ»,
Սնիստունակ, անպանդ, ասկայն ինսուս մ՛հ յոյկ,
Այս մեկ քառիկ մեջ կը գգաւ, եւ կը շնչեմ կարողին
Բարեարուած մեծ Ազգին երախտագէտ մեծ հոգին:
Հայն ընչազուրկ ի վաղուց աշիւք ոչինչ քեզ ունի.
«ՀԱՅՐԻԿ»ն ունի, քառ մ՛որուն շաւ ինչեւ եւ արժանի:

ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԻԿԵԱՆ
(ՈՍՈՒԼ ԲՈՆԵՏՈՆ)

ԹԻՒՆԻ ԱՅՍՏԱՓ ՍԻՐԵԼԻ Է ԱՄԵՆՈՒՆ
ՄԵՐ ՆՈՐԱՆՏԻՐ ՎԵՂԱՆՈՐԻ
ՀԱՅՐԱՊԵՏՆ

Ժողովուրդներու հոգին է ապէս պարզ է, Կործնական և արամբանող, ու ան-ընտել կնճռոտ զանազանութեանց և դը-ժուարիմաց նորոգութիւններու: Գրագէտ-ները, փրկիւթփայները շատ անգամ ճիշդ կամ անճիշդ նախադասութեան մը վերջին եզրակացութեան հասնելու համար առա-ւել կամ նուազ երկար և օճապոտոյտ ճամ-բէ մը կ'անցնին, իսկ ժողովուրդը կը հաս-նի անոր միշտ ամենէն կարճ ու կարուկ ճամբով: Ժողովուրդը կրնայ մոլորել ինչ-պէս ամեն անձ, և սակայն իմաստակու-թիւններ յօրինելու ո՛չ մոլորութիւնն ունի և ո՛չ կարողութիւնը:

Ամենէն յետին ռամկեն իսկ երբ չսէ Աւետարանի երկնայունը բարոյականը, քրիստոնեայ կղերիկ կատարելութեան վը-սեմ իտէպէն. իւր անաղարտ պարզութեան մէջ, կը բաղձայ որ ամեն քահանայ բարո-յականի տրպար մը, մարմնաւորուած ի-տէպ մը լինի, և որպիսի աւելի բարձրաս-տիճան է օր, սոյն պահանջկոտութիւնն նոյնչափ կ'աճի ու կը սաստկանայ անոր հանդէպ: Ու երբ ժողովուրդն ինքզինք խաբուած տեսնէ իւր անկալութեան մէջ՝ բարկանալէ առաջ կը ցաւի, կը մորմոքի, կը շարժարեւի ներքին և ճշմարիտ տան-ջանքով, և վերջապէս օր մը կուգայ յո-րում վիշտը կը փոխուի զայրոյթի և եր-բեմն վրէժխնդրութեան իսկ: Եթէ իւր ձեռքը ըլլար, պիտի պահանջէր որ ամեն պարտաւոր դադարէ քահանայ լինելէ ա-մեն ուխտադրութ քարոյշիչ՝ աշխարհական, ներէ ալ աւելի վար ինչէր ընկերային դա-սակարգութեան անդուլտին վրայ: Կիտի ռուզեր ամենէն լուրջ կամեցողութեամբ որ սոյն նորակերպ անկեալ հրեշտակներուն համար՝ յատուկ քնակավայր մ'ստեղծուէր մեր աշխարհի սահմաններէն և միջնորդէր իրենց և հոգեւ: Բայց որչափ աններող և անհիշէ նա ի տես անարժանութեանց, նոյնչափ քաղցր է ու գորովալիք՝ իրական-նութեամբ պատկեալ յոյսերու և ակնկա-լութեանց առջեւ: Տիպար եկեղեցականին, լուսամտի և սրբակոթն քահանային առջեւ իւր հիացումն՝ խանդավառութեան, յար-գանքը՝ պաշտամունքի կը փոխուի: Այլեւ գերմարդկային էակ մը, մարմնատեսի հը-րեշտակ մ'է այդ շնորհագեղ սքեմաւորն, որոյ տեսքն իսկ քարոզութիւն մ'է կեն-դանի: Եւ քարոզներու ամենէն յուզիչն — որ արցունք կը խէ ամեն աչքերէ և կը ցնցէ անխտիր ամենէն սկեպտիկներն իսկ:

Սոյնպիսի Անձնաւորութիւն մ'է որ կո-չուած է այսօր Հայ-Կաթողիկէ Հասարա-կութեան զլուսը իրեւ Ազգապետ և իը-րեւ Նուիրապետ, իրեւ Պապիարք և իը-րեւ Կաթողիկոս: Արտաքին արտոններն ու պատիւներ իւր ներքին թաղուն ար-ժանիքին հետ ուղիղ համամասական լինե-լով՝ նոր ու մասնաւոր հրապոյր մը կը դը-րոյմեն իւր բոլոր ձիրքերուն, և Ձիրքն եւս աւելի նուիրական ու մեծարելի կը կացուցանեն յաշտ ո՛չ միայն Հայոց և Կա-թողիկէից, այլ և օտարաց և այլակրօնից: Չափազանցութիւն պիտի համարուէր ըսել թէ մեր Սմեւ Գերեզ՝ Հոգեւոր Տէրն եւթ զիտցաւ իրայիլ բրիտանական կատարե-լութեամբ. ամեն երկիր և ամեն ցեղ ունի իւր գերաբարձան ընտրեալներն, որոց թիւն ամենատես Աշայ միայն է ծանօթ: Սա-կայն անժխտելի ճշմարտութիւն մը լոկ հուշակած պիտի լինին՝ երբ ըսենք թէ ներկայ սերունդին առջեւ — հարաւստին ու աղքատին, տգէտին ու զիտնականին, արհեստաւորին ու խմբաբերին — զա՛յն ցեղացեց Աստուած՝ զարդարեալ սուրբ օ-ծուքով համար, գերազգոյն բարեմասնութիւն-ներով, և կ'այլով ըզխելու իւր անձնէն ե-կեկարական հոսանքի պէս բան մը և ինքն

ձգելու սքանչազամբ ամեն սիրտ և ամեն հոգի, — ամենէն աւելի դժուարահասններն ու ամենէն նուազ գրաւելիներն իսկ:

Առ այս երկու աշխատութիւնք համըն-թաց գործեցին, մին աշխատութիւնն էր Հոգեւոր Սրբոյ, որ զայն կը ճոխացնէր, կը գեղեցկացնէր ներքնապէս. և միւսն էր իւր անձնական ճիշդ գործեցեացն աւ-րելի ընծայելու համար հանուրց, Կրօնք և Եկեղեցի: Կորովամիտ իմաստութեամբ տե-սաւ թէ դարուն և Եկեղեցոյ միջեւ ընդ-դիմութիւնն աւելի բաւերու չուրջ կը դառնայ քան իրողութեանց, յաճախ աւե-լի թիրիմաց-ւելիւն մ'է թերեւս քան բա-ցարձակ և անհաշտելի թշնամութիւն: Ա-մեն դարուց մէջ եղբայրսիրութիւն և սո-տուածսիրութիւն անբաժան են իրարմէ. բայց կան դարեր, յորս աստուածսիրու-թիւնը կը ծնի եղբայրսիրութիւն, և կան՝ յորս եղբայրսիրութիւնը կ'առաջնորդէ աս-տուածսիրութեան: Մեր ժամանակաց հա-մար սոյն վերջին պարագան է ճշմարիտ, սիրելի իւր ազգը, կարեկցիլ թշուառաց, անձնուիրի որդոյն ու աղքատին, ահա՛ ինչ որ է ապէս աւետարանական է, և ինչ որ անվրէպ կը շարժէ դարուն հոգին, մարդկութեան սիրտը, և զանոնք Աստու-ծոյ կը ծանցեն: Առանցիկ նախկին Ա-ռաջնորդը քաջ գիտէր զայն. ուստի և իւր կենանքն յարատեւ զո՛հ մ'եղաւ ի նը-պաստ հիւրին ու կարօտելոյն, անանկին և վշտացելոյն: Հանրային ո՛չ մի պարտք անփոյլ ու զաղջ զատած է զայն երբեք. բազմաշարժար Ազգի մը հին ու նոր վէր-քերը բուժելու համար՝ վսեմ ներշնչու-թիւններ ունեցաւ, համոզուած մեծին Բագրատունւոյ հետ թէ՛

«Գեղեցիկ յանգրգնութեանց են եւ եր-կինք քնակակից»» (°)

Արդարեւ չեղապէս ապացոյց՝ իւր հա-նապազօրեայ զրկանք և անձնաշարժար մահացուցմամբ՝ որ եթէ այլք յաւելորդաց և եթէ կը յօժարին նուրբել ընկերին, երկ-նից դեսպանն իւր անհրաժեշտ պէտքէն իսկ գիտէ հրաժարել յօգուտ ընկերին: Մեծ քերթողին, Գամառ Գաթիկայի հեշտա-նուազ յորդորն յաւեր արձագանք զտաւ իւր վսեմ հոգեւորն մէջ:

«Սիրէ՛ ազգըդ ոչ լոկ խօսքով, սիրէ ինչ-պէս քու անձը»

«Նրա օգտին թէ պէտք լինի, զո՛հ բոլոր քու գանձը»

«Մի՛ խնայել կեանքդը անգամ արեւնդը-բեր նորան զո՛հ»

«Ո՛չ այն յոռտով, որ քու ազգը իսկոյն լինի քեզից զո՛հ»

Որչափ բուռն եղած է իւր սէրն ազգին ու մարդկութեան համար, նոյնչափ և հզօր՝ իւր պաշտամունքն ճշմարտութեան համար, քաջ ըմբռնելով թէ սէր և ճշմարտութիւն յարազատ ու անմեկին քոյրեր են միշտ: Ո՛չ ապաքէն ազգերը կը կանգնին ճշմար-տութեամբ, և կը կործանին սոտով և մո-լորութեամբ: Հայութեան ամենէն չքնաղ փառքերէն մին, անմահ Ալիշան կը յայ-տարարէր իւր նկարագրի բարձրութեամբ. «Անգագիրութիւնն շատ լաւ բան է, բայց ճշմարտութիւնէն դուրս չեկե՛ն ամենէն լաւ բանն և և աղքատիւրութիւնէն ալ դուրս չէ՛»

Եւ որովհետեւ ճշմարտութեան դատին անհատից ոմանց զեղծմունք և ապիւրա-տութիւնք կը շնասեն մեծապէս, մեր գե-րիմաստ Հայրապետին մշտաբարձր իղձն եղած է բարեկարգութիւն հաստատել ամեն տեղ, սրբափայլին մէջ ու սրբափայլէն դուրս: Նա կը բաղձայ շնորհապէս որ ամեն կաթողիկէ, գէթ ամեն հոգեւորական կեն-դանի սպաքոյցն լինի Գր'ստոնկութեան իւր անստղծութիւն մաքրակեցեաց վարուք: Ո՛չ միայն մեղքը զաղիր, այլ մեղքին ստուերն անգամ չկրնար տեսնել կրօնի պաշտօնէին վրայ: Կրնա՞ք ուրեմն զարմանալ երբ իւր գառնուկի հեղութիւնն երբեմն առկա թաղութեան փոխուած տեսնէք. կամ ակոր ու յամառ օրինադանցութեան տեսարանն անհանդուրժելի է նմա: Ս.

(°) Հայկ Ինքագն, էջ 186:

Ներսէս Ենորհաւոյ գեղեցիկ գովեստն մեր առաջին Հայրապետներէն միոյն՝ այն-քան ճշմարտութեամբ կը պատշաճի իրեն.

«Ընդդէմ յարաց սուսեր սքրեալ
«Եւ առ բարխըն հեղացեալ»»

Եթէ աշխարհի վրայ ո՛ր է իշխա-նութիւն՝ բախտին հարուածներն, աւերիչ անակնկալները չկրնար բոլորովին խախա-նել, և նիւթական ամեն բարիք և առա-ւելութիւն չկրնար ստեղծել, ևս աւելի անբանաւոր պիտի լինէր մեզ մեր հոգեւոր իշխանութիւնէն օգտուել մի այսպիսի հրա-շագործութիւն: Եւ սակայն ի տես այն բարոյական շինութեանց, այն բարեգէտ-կարգադրութեանց, յոգնադիմի փրկաւէտ գործոց, որոց երաշխիքն իսկ է իւր անու-նը պատկառելի՝ աժմէն իսկ կրնամ ըսել համարձակ թէ այլեւս անհրաժեշտաց-սանձ դուռն է, յայցնի զգործունեւորութեան վերջին ժամն հնչած. եւ թէ ազնիւ խո-հաւգի եւ ճգումն ո՛չ եւս պիտի լսեն լաճ դիմանութիւն այլ խախտիլ եւ քաջա-լերելիւն:

Ան ինչու՞ այնչափ սիրելի է ամենուս մեր անզուգական Հայրապետն, Տ. Տ. Պօղոս — Պետրոս Ժ. Թէրզեան, լոյս Հայութեան, Պարծանք կրօնի, փառք մարդկութեան, Կեցցէ՛, կեցցէ՛ ընդ երկար. Երկինք, օրհնէ՛ զԱն, ձեռնառու լի՛ր նմա հանապաղ, և իւր մէջ մի քայլն յաղթա-նակներ թո՛ղ լինին:

Ուրիմն կրնանք և մենք երգել հոգե-զուարճ՝ աւեսաւոր երկնազգեցիկ Մար-գարէին հետ:

«Եւ ո՛չ ևս լուրցի աներաւութիւն յերկ-րի քու, և ո՛չ ընկումն և թշուառութիւն ի սահման քո. այլ կոյնսցին փրկութիւն պարսպք քո, և դուռնք քո ցնծութիւն» (Սալմի 4. 18)

15 յունիս 1910 ՀԵՐՄԱՆ ԿԼԻԿԻՐ

ԱՄԵՆԱՊԱՏԻՏԻ ՏՅԱՌՆ ՏՅԱՌՆ
ԹԵՐԶԵԱՆ ՊՈՂՈՍ ՍՐԲԱԶԱՆ
Կ-ՊԱՏՐԻԱՐԻՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՐՈՅ
ՄԵԿՆՈՒՄԻ ԱՌԹԻԻ ՄԻ ԳՆԻՆ ԽՕՄԲ


Համակ տխուր ու տրտում զրկը ձեռքս առած թէպէտեւ անկարող կ'ուզեմ յետա-հայեաց ակնարկ մը նետել Նորին Ամենա-պատուութեան Պօղոս Սրբազան Կ-Պատ-րիարքի 18 տարի ամբողջ Աստանայի մէջ անցուցած գովելի պաշտօնավարութեան և կենցաղավարութեան վրայ: Սակայն այնքան բազմաթիւ են չափած ջանքերը և գործունէութիւնները՝ որ կէտ առ կէտ նշանակելու համար ստուար կշիւ պէտք են զանոնք պարփակելու: Ուստի իբր մօ-տէն իրազեկ կը գտնանամ մասնանշելով Նորին Բարձրապատուութեան մի քանի երեւելի ճշմարտութիւնները:

Թէրզեան Պօղոս Սրբազան, տիպար ե-կեղեցական, սուրբ քահանայ, յայգեղ Տիառն անխնայ մշակ, անձնուէր հովիւ, Հայութեան ճշմարիտ պաշտպան, նուր-րական անձնաւորութիւն մ'ըլլալուն ոչ ոք տարակուսած է: Իր բարեօք կենցաղա-վարութեան քաջանմուտ անձինք զինքը շատ լաւ ճանցած, զնահատած և սիրած են: Իբր գործուղագրէ հայր 18 տարի ամ-բողջ ապրեցաւ Աստանայի ժողովրդեան հետ սիրալի համակրութեամբ՝ որ բարե-բաղդաբար Աստուածային նախախնամու-թեամբ իւր մեկնումն ալ զուգադիպեցաւ ճիշտ 18 տարի առաջ Աստանայի հողին վը-րայ կոխած հինգաբլթի օրուան թուական-նին: Նորին Վեհափառութիւնն ճշմարիտ հօր մը խնամածութեամբ սիրտից որբե-ւայրիները, պատապարեց որբերը, թշուառ-ներուն և ինկածներուն սաստար, քորավիզ եղաւ, աղքատներուն ողորմեցաւ, բարե-բարեները և օգնութիւնները բազմապատ-կեց, ի մի բան Աստանան և իր բոլոր թե-մերը նիւթական և բարոյական տեսակէ-տով զարգացուց, շնչեցուց: Տարուի բա-

զուկներու ծոցը հանգչող Հանճոյ դաւա-ռակը կրթական և կրօնական հաստատու-թեամբ օժտեծ կանգնելով Ս. Աստուա-ծածին քարաշէն հոյակապ եկեղեցի մը՝ խորասուզելով ինքզինքը ամրաներ ու տա-րիներ հոգեւոր մէջ, Մի կողմանէ նիւ-թական պակասութիւն, միւս կողմանէ բռնակալ կառավարութեան յարուցած դժ-ուարութիւնները Նորին Սրբազնութիւնը յոգնատանջ աշխատութեանց ենթարկեց: Գրեթէ ամբողջ իւր տարիներ գիշեր ցո-րեկ աշխատեցաւ, յոգնեցաւ, մինչեւ որ կրցաւ ամենայն յաջողութեամբ սոյն կրօ-նական հաստատութիւնը աւարտած էր: Հազիւ թէ այս շինութիւնը աւարտած էր՝ իւր համակրելի անուան անուանակիր Տար-ստեան փողոյն Սրբոյն Պօղոսի հայրենիքն ալ դպրոցով և առաջնորդարանով շէն-ցուց հիմնարկելով Ս. Պօղոս քարաշէն ե-կեղեցին: Սակայն Ապրիլեան ջարդին սոյն հաստատութիւններն քար ու քանդ, մոխ-րակոյտի վերածուած մահադոյժ բուխրու-բոյն դարձած էին: Նորին Սրբազնութիւնն չվարանեցաւ սոյն անցուկ տարուան մէջ կիսատ մնացած եկեղեցոյն և աւերակ դարձած Առաջնորդարանի վերաշինութեան սկսելու, և անա զեւ չլմնցուցած ստիպ-ուեցաւ մեկնել՝ խոստանալով միանգամայն թէ պատրաստ է օժման արարողութիւնը հանդիսապէս կատարելու համար կրկին վերադառնալ իւր նախկին շէնցուցած թեմը:

Բաց աստի անթուելի են Նորին Վե-հափառութեան Ատանա բարեհաճած օրէն ի վեր Ազգին ընծայած բարեգործական հաստատութիւնները: Գրեթէ Ստանան կանոնաւոր ո՛չ եկեղեցի, ո՛չ առաջնոր-դարան, ո՛չ դպրոց և ո՛չ ալ ուրիշ հաս-տատութիւններ ունէր: Նորին Սրբազնու-թիւնն էր որ ամբողջ 18 տարի անխնայ աշխատեցաւ, երկար ամիսներ թափառե-ցաւ Եւրոպայի քաղաքները իր թեմին և ժողովրդեան յառաջդիմութեան համար օ-լորտութիւն հայցելով, և իրաւել բաւական մեծակ զուժարով մը վերադառնաւ Ա-տանա: Իւր առաջին գործն եղաւ փառա-ւոր հոյակապ վարժարան, կղերական կանգ-նել տալ՝ որ այս հիշիկեան կործանարար ջարդին առջն ինչ, եկեղեցի, առաջնորդա-րան, մարապետանոց, վարժարան, կղե-րանոց, որբանոց մոխրակոյտի դարձան, գեանին համահաւասար եղան՝ բոլոր 18 տարուան աշխատութիւնները փճացան: Ոչնչացան անասկ որ՝ իր գլուխը հանգչե-ցնելու տեղ մ'իսկ չկրցաւ գտնել: Բայց սակայն չլուսահատեցաւ. առանց թերա-նալու իւր պաշտօնին մէջ աւելի կործով աշխատեցաւ գիշեր ցորեկ, հարուստե-րուն և բարերարներուն գթութեան, ո-ղորմածութեան դիմեց. ամբողջ 7—8 ա-միս անհանգիստ հոս հոն պատապարտելով կանգնեց աւերակներու մէջ առաջուրէն աւելի փառաւոր քառայարկ վարժարան մը որուն առաջին յարկը դպրոց, երկրորդը առաջնորդարան, երրորդը եկեղեցի և չորրորդը որբ աղայոց ննջարան յաակա-ցուած է: Ասկէ դուր քաջած նեղութեան, պիւտեճէին նուազութեան չնայելով, սոյն անձուկ տարուան մէջ երկու վարժատուն մանչեւու, երկու վարժատուն ալ աղջկանց բացաւ. 500է աւելի երկսեռ մանուկներ դաստիարակուեցան սոյն կրթական հաս-տատութեանց մէջ: 60ի չափ երկսեռ որ-բեր ալ գիշեր ցորեկ խնամուեցան և կը խնամուէն որբանոցին մէջ: Նորին Ամենա-պատուութեան գովելի ջանքերէն մին ալ Չարչափուգի թաղին եկեղեցին և դպրոց-ները եղան՝ ուր կրկին ու կրկին արկած-եալ Հայեր իրենց հոգեւոր միջնորդութիւ-նը և իրենց զաւակաց բարոյական կրթու-թիւնը կ'ստանան առատօրէն, մինչդեռ ասկէ շատ տարիներ առաջ նոյն թաղին բնակչութիւնը զուրկ էր այս բոլոր միջ-նորդութիւններից: Եւս այսպէս բոլոր թա-ղեցիք շնորհապարտ և երախտագէտ են Նորին Սրբազնութեան, ինչ մեծ և գնա-հատելի նորոգութիւն...

Սակայն նուիրական պարտականու-թիւն կը համարիմ անդամաւորուել անց նալ տարուան անթեալ ապրիլ 1ի տօնա-



Տախլիլ քեօրիւ սէվահիլինտէ եօճը
նադօր իշէն վաթօր իլլէթէն գումաթնիւս,
էլան Խունան րէմօրքէօրլէրին գուլլան-
մագաւ օլաղընտան, գումաթնիւս 300
Օսմանլը իմգալ պիր մէթթուպլա պիր

